ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՊԵՍ ԿԱՐԵՎՈՐ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Գործառույթներ.

Բաժնի առաջատար խորհրդատուն՝

1) Ապահովում է հարկադիր կատարման ենթակա ակտերի հարկադիր կատարումը.

2) Իրականացնում է Բաժնի կանոնադրությամբ նախատեսված առանձնակի տեսակի կատարողական վարույթներով համապատասխան կատարողական գործողությունները՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին և ոլորտը կարգավորող այլ օրենքներին համապատասխան: Մասնավորապես՝

ա) իրականացում է կատարողական վարույթով հետախուզվող գույքի կամ պարտապանի հայտնաբերմանն օժանդակող կատարողական գործողություններ.

բ) իրականացնում է կատարողական վարույթով հետախուզվող գույքի վերաբերյալ ստացված տեղեկատվությանը համապատասխան կատարողական գործողություններ (արգելանք, առգրավում և այլն).

գ) իրականացնում է օրենքով սահմանված կարգով պարտապանին կամ այլ անձանց պատկանող շենք, շինություն հարկադիր կարգով մուտքի ապահովմանն օժանդակող կատարողական գործողություններ.

դ) իրականացնում է տարածքային այլ մարմիններում բարդ կամ ծավալուն կատարողական գործողությունների օժանդակում.

ե) մասնակցում է ֆիզիկական ուժի կամ հատուկ միջոցների գործադրման հնարավորություն ենթադրող այլ կատարողական գործողություններ:

3) Բաժնի կանոնադրությամբ նախատեսված կատարողական գործողությունների կատարման ընթացքում իր իրավասության սահմաններում կայացնում է որոշումներ.

4) Նախապատրաստում է իր վարույթներով դիմում-բողոքների պատասխան նախագծերը.

5) Կատարողական վարույթներով դատական, կատարողական վարույթի կողմերին քրեական և վարչական պատասխանատվության ենթարկելու գործերով համագործակցում է Ծառայության իրավաբանական բաժնի հետ:

6) Կատարում է բաժնի կանոնադրությամբ սահմանված և (կամ) Բաժնի պետի կողմից իր իրավասության սահմաններում տրված այլ հանձնարարականներ:

2. Պաշտոնին ներկայացվող պահանջները.

Աշխատանքային ստաժ և աշխատանքի բնագավառում փորձ չի պահանջվում: Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 30 հուլիսի 2020 թվականի N 461-Ն որոշմամբ: